04402155
Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Ջանֆիդայի գյուղապետարան

04402155
Республика Армения
Армавирский марз
Джанфидинский
Муниципалитет

Հասցե գ. Ջանֆիդա

Թիվ 317. 06.12.2019 թ.

Адрес. с.Джанфида

номер 317. 06.12.2019 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի լրումն Ջանֆիդա համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 14-ի 103-Ա և 2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 113-Ա որոշումների, Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության վերոնշյալ որոշումների փոփոխված օրինակները:

Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի նոյեմբերի 14 թիվ 103-Ա որոշում

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Դավիթ Խուրշուդի Այվազյանին դիմել է Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի 22 փողոց 9 հասցեում գտնվող 0.1936 հա. տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:
Հաշվի առնելով որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001 թ., հողամասը համապատասխանում է Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին,2-րդ,3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում , ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 . Վերականգնել Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի 22 փողոցի թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացի Դավիթ Խուրշուդի Այվազյանի /ծնված 22.09.1947 թ./, սեփականության իրավունքը 1936 քմ. օրինական հողամասի վրա կառուցված 30.9 քմ. օրինական բնակելի տունը՝ կառուցված 1970թ., 53.3 քմ. օրինական բնակելի տուն՝ կառուցված 1970 թ., 5.5 քմ. բաց պատշգամբ կառուցված 1970 թ., աստիճաններ 3.9 քմ. կառուցված 1970 թ., 83.7 քմ. բնակելի տուն կիսանկուղ՝ կառուցված 1970 թ.նկատմամբ:
2 . Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Դավիթ Խուրշուդի Այվազյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք շինություններ նկատմամբ , տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՆՖԻՐԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի նոյեմբերի 27

թիվ 113-Ա որոշում

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Գառնիկ Հրայրի Խոսրովյանը /ծնված 1958 թ./, Սուսաննա Գուրգենի Խոսրովյանը /ծնված 1961 թ./, Վիրաբ Գառնիկի Խոսրովյանը /ծնված 1983 թ./ դիմել են Արմավիրի մարզի Զանֆիրա համայնքի 14 փողոց 15 հասցեում գտնվող 0.1743 հա. տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:
Հաշվի առնելով որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001 թ., հողամասը համապատասխանում է Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում , ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 . Վերականգնել Արմավիրի մարզի Զանֆիրա համայնքի 14 փողոցի թիվ 15 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացի Գառնիկ Խոսրովյանի /ծնված 20.05.1958 թ./, Սուսաննա Գուրգենի Խոսրովյանի /ծնված 1961 թ./, Վիրաբ Գառնիկի Խոսրովյանի /ծնվ. 1983 թ./ սեփականության իրավունքը 1743 քմ. օրինական հողամասի վրա կառուցված 177.1 քմ. օրինական բնակելի տանը՝ կառուցված 1984թ., 5.9 քմ. օրինական բնակելի տան՝ կառուցված 1984 թ., 14.6 քմ. բաց պատշգամբի՝ կառուցված 1984 թ., աստիճանների նկուղ՝ 4.1 քմ. կառուցված 1984 թ., 10.7 քմ. բնակելի տան նկուղ՝ կառուցված 1984 թ., անասնաշենք 20.1 քմ.՝ կառուցված 1985 թ. նկատմամբ:
2 . Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գառնիկ Հրայրի Խոսրովյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք շինություններ նկատմամբ , տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան